

գեւեալ արդիւնս յօլովս գիւղաւայտ, այգեստանս
խուղպականի եւ ջաղացանի, որ եւ ցուցանէ իւր
արձանագիրն մի ըստ միօքէ. եւ փարթամացու-
ցեալ ամենայն դոյլոք առ ՚ի լնուլ եւ առաւելուլ
դպէտս կարեւորս զիւրեանց եւ զեկաց. եւ ժամա-
նակս ոչ սակաւս, զի աւերեալ էր յանաւրինաց
եւ զվանքս գեղ արարեալ եւ զկաթուղիկէս բեր-
դանման ամրացուցեալ, եւ կայր ՚ի խաւարի եւ
՚ի սղաւորութեան զըկեալ յամենայն դոյլից մինչեւ
յաւուրս յայտոսիկ, Խսկ ՚ի Ուշ. թուականիս
Հայոց քաջ եւ արի զաւրականն Գրիստոսի սի-
րելի եղբայրն իմ Խարիփն իմով կամակցութեամբ
խորհուրդ բարի ՚ի միտ արկեալ ազատել զսա ՚ի
տղմուտ եւ ՚ի զաղիր մթնազգածութենէն, Հա-
սուցանել նախկի փառաւորութեանն, Հանեալ
արտաքս զշինականն, եւ եղև բնակարանս սրբոց
քահանայից եւ կրանաւորաց Հաճոյացելոց Աս-
տուծոյ, զարդարեցաք զսա սպասիւք պայծառա-
զգեստիւք սրբութեամբք ոսկեղէն եւ արծաթեղէն
Հին եւ նոր կտակարանաւք եկեղեցականաւք, եւ ըն-
ծայեցաք ՚ի սմա նուէր զմեր Հայրենի գեղն. զԱ-
զատա, եւ որ ՚ի վանիցս, Հօղիս վերայ շինեցաք,
եւ անուանի Տիրաշէն. եւ յայսկոյս գետոյն ջա-
ղացանի՞, որ կան ՚ի կամրջէն ՚ի վայր եւ վեր
զխոտ զհօղ եւ զօր ինչ իսկզբանէ ունեկն, եւ ՚ի
քաղաքիս զմեր պապենի Հայրենիք եկեղեցին
զսուրբ Ստեփաննոս բոլոր ամենայն ժողովրդ-
դեամբն, եւ երկու այգի ՚ի Մարմէտի որ ՚ի
նախնեաց մերոց ՚ի մեզ էր Հասեալ. եւ միաւո-
րեցաք զվերի վանքն մեծ վանիցս իւր ամենայն
ստացուածաւք եւ լիցի հրամանաւ միոյ Առաջնոր-
դի, մինչ այս առ այսչափ, կատարեցաւ առ ժա-
մայն գեղեցկագեղ եղբայրն իմ Խարիփ Մագիստ-
րոսն զովմալն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ
՚ի պատերազմի անաւրինաց, եւ միայն մնացի ես
Գրիգոր եղկելի եւ զըկեալ ՚ի նմանէ, զմարմինն ու-
րա բերեալ լմաղեցաք առ զրան սրբոյ կաթուղի-
կէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ Ահաճաւայ
իշխանի, եւ փոխարէն հատուցեն սպասաւորք սո-
րա ընդ մերոյ արդեանցս զոր արարաք, զԱթու-
ղիկէիս զաւագ խորանին պատարադ յանուն նա-
հատակին Գրիստոսի Խարիփն կատարել յամե-

նայն օր իսկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն
տարոյն յայսմ հետէ մինչ ՚ի ծագումն որդոյն
Աստուծոյ. որ որ խափանէ կամ շօրթեղ ջանայ
յրնչից եկեղեցւոյս, որոշեսցի ՚ի փառացն Աստու-
ծոյ եւ զըկեսցի ՚ի մշտնջենական կենացն. կատա-
րիչք զըկոցս աւրհնեսցին Աստուծոյ եւ ՚ի սրբոց
նորա յօգի եւ ՚ի մարմինն:

Արշակունիք Եւ Տաթևոյ գոթան հիւսիսական
Խաւարնէն:

Ես տէր Գրիգորս տեառն Սարգսի ետու զիմ
սուրբ նշանս ՚ի սուրբ ուխտս Մարմաշինի. եւ փո-
խարէն հատուցման զԱւարդեւորին քառասունքն
եւ զԽաչին ութարէքն, մինչ ես կենդանի եմ,
տեառն Սարգսի, եւ յետ իմ վախճանին՝ ինձ. եւ
եթէ որ առաջնորդ որ լինի խափանէ, նղովեալ
եղիցի. ՚ի սմա կատարիչ զրոյդ աւրհնեալ եղիցին:

(Շարունակելի):

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Դ Ա Ր Զ Ե Ա Ն

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

ԽԵՂԻՐԸ

Հատ անգամ ասուած եւ գրուած է թէ՛ մեր
ազգը, թէ՛ հին եւ ծեր, բայց այժմեան լուսաւո-
րութեան եւ քաղաքակրթութեան ասպարիզի մէջ
դեռ եւս մանկիկ մի է. Այո՛, երեխայ, այդ այժմ
կը խոստովանի ամենայն ուշիմ մտածող Հայ,
Սակայն երեխայական հասակն եւս ինքն ըստ ինք-
եան կ'անցնի զանազան աստիճաններէ կամ շըր-
ջաններէ. Արդ՝ ո՞ր շրջանի մէջ կը գտնուինք մե՛նք,
Ըստ մեզ՝ համեմատութիւնը շատ յառաջ տա-
րած՝ կամ սահմանէն հանած չենք լինիլ, եթէ
պատասխանէինք թէ՛ նոր ատամնաբուսութեան
շրջանի մէջ կը մտնենք. Եւ յիշաւի, մեր ազգը
այժմ՝ բաւականին մեծ նմանութիւն կը բերէ նոր
ատամնածին երեխային՝ Նպփեցէք, զիտեցէք՝ որ-

պիտի դժուարութիւններ կ'կրէ խղճուկ երեխան իրեն մի ատամ բուսնելիս, որքան ցաւեր և տառապանք պիտի տանի մի նշի նորա-ւոյ և հորիւ ատամներն յայտնուելը, Ամենայն ծնող իւր տեսածով և փորձովը դիտէ թէ որքան վտանգաւոր և երկիւղալի է այդ ժամանակամիջոցը երեխայի բնական զարգացման եթէ մեծ զգուշութիւն և խոհմութիւն գործ չը գրուի, մինչ զի՝ սովորութիւն եղած է՝ երեխայի կեանքն անգամ ապահով չը համարել Օրհասի ձեռքէն՝ քանի՜ որ զլիաւոր կ'ընեն հոգիւր զուրս չեն ցայտել անվնաս, Ինքը՝ երեխան այդ հասակի մէջ մի անդոր և անգէտ կազմուածք կը ներկայացնէ, որ ոչ հասկանալ կարող է իւր ցաւերն պատճառները, ոչ կանոնաւոր կերպիւ յայտնել իւր ցաւերը և պիտոյքը, — լոք լայն է նորա բոլոր հոգեկան կենաց արտայայտութիւնը, Միւս կողմանէ՝ ծնողք, ծծմարք կամ դայակները և առհասարակ հասակաւոր շրջապատողքը առողջապահական դիտմամբ՝ ամենէն շատ այդ պատահանքների մէջ սխալ կը գործեն, Մէկը՝ օրինակի համար, բոլոր հիւանդութեան պատճառը մօր կամքն տալով (թէ և նա՞նք բնաւուծել էր այդ կամքը և ոչ իսկ համը առել որպէս հարկն էր), չորացնել աղաղակում է մօր ծիծը և զանազան օտարոտի կամ անհարազատ և խորթ դեղօրէքով կամի պնդացնել երեխայի ստամոքսը, Միւսը՝ տեսնելով, որ երեխան ծանր տկարութեան ներքոյ անգաղար լայով կը նուազի, առաջարկում է շինծու առօռուտներ և այլ շաքարախառն կամքի իրրեւ սնունդ, Այսերպ և շատերը, որ մէկը հաշուեմ, մինչև որ ումանց յաջողի բարեպատեհ դիպուածով մատը գնել երեխայի բերանը և վերջապէս շոշափել բորբոքած լնդերացվերայի կոշտութիւնը, — "Երեխան ատամ կ'հանէ", զգոյշ լինիք, քանի՜ որ այս կարևոր գործողութիւնը կատարումն չէ առել, կազմուածքի միւս գործարանները խանգարմանէ չեն դադրիլ, հարկաւոր է այստեղ իսկական մօր առողջարար սնունդը կանոնաւոր կերպիւ մատակարարուած, աղատ և մաքուր օդ, անխոնջ հսկողութիւն երեխայի բուսական կամ աճեցողական զօրութեանց, քայլ առ քայլ ուրեմն՝ հետեւել բնու-

թեան ուժերին և աշխատել նոցա լուաղոյն ընթացք տալ, — և ահա մեր երեխան պատրաստ կը լինի անվտանգ ատամնարուստութեան, Երջանիկ է նա՝ եթէ իսկոյն գործ դրուէին այդ և նման բարի խրատները, և յառաջ չը գային մի այլ նոր տեսակ հոգատարներ, որք կ'անուանին ատամնարոյժներ, Այդպիսիք բաւական է, որ ատամի ձայն լսեն՝ ազցանը (քէրիէթուն) ձեռին նարմուկ բարձրացրած իսկոյն կը վազեն՝ "բերէք, բերէք՝ ուղղակի ատամները դուրս քաշենք — պրծաղենաց", — Ինչ ասես . . .

Ահա այսպիսի դժուարութեանց, տառապանաց, և շփոթութեան մէջ է լինում մեր զանազան տեղերի հասարակութիւնը ամենայն մի իւր բարոյական ատամն հանելիս, Այդ բացայայտ տեսնուեցաւ և կը տեսնուի մեր տաճկարնակ աղաղայնոց Սահմանագրութեան վերայ, Այժմ մեր ժողովրդի մէջ՝ Դոքս Բան, Ինքիւն և Էրեւն Իրեւնիւնը հոգեւոր առանձն ծառայելու ատամներն են, որ բուսնելու վրայ են և մեր կազմուածքի բոլոր ուժերը իւրեանց կը պահանջեն, Այդ ատամներով միայն մեզ կարելի պիտի լինի Բնի և պատրաստել մեր դեռ ևս թող կազմուածքին Իրեւնիւն և Էրեւնիւնիւն այն լիուլի բարոյական նիւթը, որ մեր առաջին զրաժ ունի արդի քաղաքակրթութիւնը, և որոյ ուղղակի մարսելը մեզ պիտի անկարելի է կամ շատ դժուար,

Այս նոր ատամնածնութեան կարգէն է անտարակոյս մեր ամենակարեւոր խնդիրներէն մէկը, այն է՝ Էրեւնիւնիւն պատրաստելու Ինքիւնը, Սորա հետ կապուած կը տեսնենք և մեր աղգային ատամնարանաց ծրագրի և նշանակութեան որոշումը,

Ինչպիսի ձայներ, ինչպիսի առաջարկութիւններ չը լսուեցան արդեօք մեր օրագրաց և լրագրաց մէջ այս մասով, Մենք չը կամինք այստեղ բոլորը մի առ մի յառաջ բերիլ — այդ մեզ շատ հեռու կարող էր տանել, Այլ՝ ընդհանրապէս կ'ասենք, որ ցաւի տեղը և բունը չխմանալուց՝ առաջարկած գեղորայք կրթման անտեղի էին, երբեմն փնասակար անգամ, Երբև օրինակ այս մօտերիցս՝ հարեանցի կերպիւ մեր ընթերցողի

միտը՝ ձգենք միայն "Մ" 1869 թվական. թեր-
թերի մեջ տպած Ռուսիացի մի պարոնի խորհրդ-
դածութիւններ Թիֆլիզու Ներսիսեան Գալոցի վե-
րաբերութեամբ, (Յողուածի հեղինակը 'ի շարս
այլ եղբակացութեանց՝ վերջ 'ի վերջոյ գալիս է
հետեւեալին թէ՛ "Ներսիսեան Գալոցը մի հիմնա-
ւոր ծրագիր չունի, մի որոշեալ նպատակ այժմ
չէ երեցնում. հետեւաբար թշուառ գրութեան
մէջ է", Այս թերութեան և անորոշութեան գլխա-
ւոր պատճառն ևս՝ Գալոցը Հոգեւոր իրաւասու-
թեան տակ լինելն է կարծում. Առաջի պարբե-
րութեան դէմ՝ չը խօսինք. գարով երկրորդին՝ կը
հարցնէինք. Հոգեւոր իրաւասութիւնը ինքն ըստ
ինքեան ի՞նչ կը թելադրէ, եթէ ոչ այն թէ՛ Ու-
սումնարանը ժողովրդի համար կրթեալ հոգեւո-
րականներ և կրթեալ վարժապետներ՝ պատրաս-
տէր, Մեր այժմեան գրութեան մէջ՝ ամենայն
խոհեմ մարդ մի և նոյն կերպիւ պս երկու գործը
անբաժան պիտի համարէ. այսինքն՝ կրթեալ վար-
ժապետացուն մի և նոյն ժամանակ քահանայա-
կան պաշտօն վարելու կարող պէտքէ լինի. իսկ
կրթեալ քահանայն՝ այժմեան մօքով վարժապե-
տական գործին ընդունակ, — Եթէ ուրեմն՝ Գալ-
ոցի Տեսչութիւնը տեսնէր իրաւի ազգի այժմեան
ընդհանրական կարօտը, և նպատակ դնելով՝ նախ
և առաջ վերը յիշած մօքով քահանայացիներ
և քահանայի պատրաստութեան ծրագիրը, իւր ուսման ծրագի-
րը՝ լուսաւորեալ Տէրութեանց միջնակարգ ու-
սումնարանաց չափով՝ այնքան լայնացնէր, որ
այդտեղ աւարտողները փոքր առ փոքր կարողա-
նային ուղարկուիլ Եւրոպա՝ ուղղակի իւր-իւր
հասնելու (մնացողները որպէս լա-
պատրաստուած վարժապետացուք, 'ի հարկէ, ազ-
գի մէջ անհետ չէին կորչելու թէ՛ իւրեւ քահա-
նաներ և թէ՛ մասնաւոր այլ ասպարէզների մէջ).
հարցնում ենք դարձեալ. այսպիսի մի օգտաւէտ
նպատակի իրագործելուն պիտի ընդիմանա՞ր Հո-
գեւոր — Իշխանութիւնը, և կամ նորա իրաւասու-
թեան թելադրութեանն զօրս էր այդ. քաւ լիցի,
Պարոնը, երեւի, մոռանում է, որ եթէ ժողովրդ-
ի առաջաւոր անձինք՝ ինքեանք իւրեանց ժողո-
վրդի բուն կարօտը երկրորդականէն ջոգել չիմա-

նան՝ մինակ Հոգեւորի ինխառախմբ փոքր կարող
է օգնել. դրօթինակ, Ռուսիացի պարոնին ան-
յայտ չը պէտքէ լինի, որ մի քանի տարի առաջ
երկու թէ՛ երեք երիտասարդ՝ Էֆէնտեանցի՝ Գալ-
ոցին կտակած գումարով ուղարկուեցին Եւրոպա
ընդհանուր ուսում առնելու. հարցանում ենք՝
Հոգեւոր իրաւասութիւնն էր մեղաւոր, որ նոցա
վերայ անհրաժեշտ պարտք չը դրուեցաւ վարժա-
պետական գիտութեան և արհեստի մէջ կատա-
րեալգործուելու և մի որոշեալ ժամանակամի-
ջոց Գալոցին ծառայելու. կարծենք նոյնպէս թէ՛
հանգուցելոյ կտակի ոգւոյ դէմ ևս չէր այդ, Այս-
տեղ մենք ամենեւին գիտաւորութիւն չունէինք՝
կտակահատարներին կամ այս և այն մասնաւոր ան-
ձին ակնարկելը. որովհետեւ մեր ընդհանուր գոյ-
ծերի որոշեալ գիտակցութիւն չունենալը շատերիս
պակասութիւնն է. Մեր ասելն այսքանն է թէ՛
երբ այսպիսի հասարակ պարագաների մէջ անգամ
(ուր թէ՛ կարօտութիւնը, թէ՛ այդ կարօտութիւնը
ըստ չափու լրացնելու կերպը ինքն ըստ ինքեանց բաց
յայտնի էին) մեր Թիֆլիզու առաջնաւոր անձինք
կը դժուարանան մի նշանակեալ նպատակ ցոյց տալ.
. . . Ուրեմն՝ Պ. Ռուսիացւոյ կողմանէ՝ Գալոցի
թշուառութեան մեղադրանքը առանց փաստերի
Հոգեւոր իրաւասութեան վրայ ձգելը՝ ի՞նչ միտք
ունի, եթէ ոչ՝ միակ վայրարանութիւն, վնասակար
ըմբռնողութիւն. երանի չէ՞ր լինի եթէ մենք
Հոգեւոր իրաւասութեան շրջանի մէջ եղածը միայն
ըստ կարգին կարողանայինք մշակել, այդ ևս մեզ
բաւական էր.

Ինքը՝ Պ. Ռուսիացին, որ զուցէ մեր առաջ-
նաւորներից մինն է, ուր է նորա առաջարկած
որոշեալ նպատակը, Զը լինի՞ թէ՛ պարոնը, դրաւ-
ուելով իւր բերած մասնաւոր օրինակներէն (Վա-
զազեանի, Թիւսիկեանի, Արամեանի) կամի՞ Ներ-
սիսեան Գալոցը կէս — հէսուսէ՞ նման մի ու-
սումնարանի փոխարկած տեսել, որպէս զի աւար-
տող աշակերտները ուսնող դաստոյններ ձե-
ռուսէ կը դաւատունը ընդունուէին, եթէ
այդքան տեղն է հասել, լաւ չէ՞ր լինի՞ Ներսիս-
եան Գալոցը ուղղակի դաւառական Ուսումնարան
չինէինք. . . — ահա՛ ձեզ հիանալի էդէու, պատ-

ուելի՝ Հոգաբարձուք՝ Ներս. Գաբրիել, . . . Մեզ
կը մնայ միայն ցաւիլ, որ "լիւսիւն" պէս պատ-
ուական լրագրի մէջ, ուր սովոր էինք լսու մեծի
մասին իսկական և ազգի բուն յատաշար-
ման մեծան ծառայող գրուածներ կարդալ, ապա
գտանք յիշեալ Պ. Պատիւազար ծանծաղամիտ
յոգուածն ևս. Ի հարկէ այդ պիտուածով
լիւսիւն Իմացորութիւնը անգամնեղն շատ հեռու
ներ, նախ՝ որ նա լաւ տեղեակ չէր լինել Թիֆլի-
զու Գաբրիել հանգամանքներին, և երկրորդ՝ իր ու-
րիշներէն պարզելու նպատակաւ այդ կարող էր
տպել:

Աւարժապետներ պատրաստելոյ բուն խնդրոյ
մասին եղած զանազան շփոթարմուտի մեծոց օրի-
նակները պատեղ բերելը դարձեալ կը երկարէր:
Եւ յարմար կ'տանէր, որ ինքնահրաւեր ատամնա-
բոյժները այս խնդրոյ մէջ ևս պակաս չ'էին:
Եւ հա՛մ մինչև ց'այժմ՝ լսածներին բովանդակու-
թիւնը կարճատև. "Աւրապայում՝ վարժապետա-
կան Գաբրիելներ կան, ուր զատաբարակուում են
կատարեալ կրթութեամբ ուսուցիչներ. մենք ևս
հարկաւորութիւն ունենք պզգպիտ ուսուցիչներէ:
Ուրեմն՝ . . . ուղարկենք մեր երիտասարդները Ազգի
գումարով ուղղակի այդ Գաբրիելներ": Եւ յատա-
շարկութիւնը հեռեւորաբար կամ՝ յորմարմարեղն
արած կը լծուի. և մենք մի բան չ'էինք ունենալ
սորա գէժ տակու, եթէ միայն մասնաւոր գէւո-
քերի վերաբերէր: Օրինակ, եթէ այս կամ՝ այն
բարեգործ Ազգայինը՝ ցանկալով իւրեանց բարե-
գործութեամբ ոչ միայն երկու երեք անհատներ
Ազգի մէջ բարգրել, այլ՝ զոցա միջոցաւ մեր
ընդհանրութեան որոշակի կարօտը մատակարար և եթ
լրացնել, — կ'հրաւիրեն այդ նպատակին ձեռնառու
երիտասարդներ Աւրապա՝ Գատաբարակութեան
բարձր ուսման մէջ կատարելագործուելու, փառք
և պատիւ պզգպիտեանց, Աւ մենք ամենա, ի հարկէ
յորդոր պէտքէ կարգաւոր միւսներին ևս հեռեւեղ
զոցա, որովհետև զոցա Ազգի մէջ մեծագործու-
թեան սկիզբն են գնում, Պակայն չը պիտի մոռ-
նանք, որ պզգպիտներ հոգաբարձուներէց մենք —
երկուսը կը պատահին, որովհետև մասնաւորնե-
րի համար, իրաւի գործը պնդան հեշտ չէ Այս-

քանը միայն միտ բերենք լծէ՝ մեր փոքր 'ի շատե
ձեռնառու համարուած երիտասարդներին Աւրապայ
լուստարեալ քաղաքները ուղարկելով՝ նախ և
սաւաջ՝ գեռ հրքան հոգաւորութիւն պէտք կը
լինի նոցա ընդհանուր զարգացման, մարմնի և
մի երկու հարկաւոր օտար լեզուաց լեզուութիւնը
լրացնելու համար միայն . . . Աւ դարձեալ,
Ներսէսեան Գաբրիել շատ անգամ՝ այս կամ՝ այն
գիտութեան ուսուցիչ, պիտաւոր վարժապետի կամ՝
Տեղի պակասութիւնէ կրել, Փոխանակ՝ համա-
լսարաններում աւարած (լսու մեծի մասին զատ-
աբարակութեան անտեղեակ և պիտաւորապէս իւր-
եանց մասնաւոր գործերին զբաղուած) արարնայց
շնորհներին (մասնաւորից) տրտակու, և երբեմն այդ
շնորհները բաւականին մեծ գումարով ձեռք բե-
րելու, անտարակոյս, վերջի տարիների [հոգաբար-
ձութիւնը] առաւել անտախտար և՛ հեռատեսու-
թեամբ (վարուած կը լինէին, եթէ Գաբրիել գու-
մարներէն մաս մի յետ ձգելով անօրինակն՝ գեթ
երկու տարին միանգամ՝ այս կամ՝ այն յատուկ
ձեռնառու երիտասարդը Աւրապա ուղարկելով, որ-
պէս զէ սորա արդի զատաբարակութեան և վար-
ժապետական արհեստին համեմատով՝ զպին իւր-
եանց անուցանող Գաբրիել մի ժամանակամիջոց
համեմատաբար աժան ծառայէին, իրրե վճարումն
պարտուց, Այս կերպ լծէ և տակաւ առ տակաւ՝
մինչ ց'այժմ՝ Գաբրիել ոտքի կանգնած չ'էր լինել:
Ի հարկէ, այժմն՝ մանուսնոյ առաւել փառահա-
լութեամբ պզգպիտ բարեացատիւ և բարեբեր ձեռ-
նարկութեանց յոյսեր պէտքէ ունենանք ներկայի
մեծաշան Տեղի հեռատեսութեան և Պեճապ.
Հոգաբարձուաց խահմութեան:

Առաջինը՝ պապիտ մասնաւոր գէւոքերի մէջ պզ
յորդորը և սաւաշարկութիւնը ունի տեղի. բոլոյց
երբ պզգպիտ սաւաշարկութեամբ մեզ ասում են լծէ՝
Մեր գատաւները՝ մեր փոքրիկ քաղաքները տղի-
տութեան խաւարի մէջ, նախապաշարմանց ձեռն
անտեղի զրկանաց, և փամեղների տակ կ'հեծեն,
և կը հատաչեն, — սոցա ահա՛ պէտք են կրթեալ
Աւսուցիչներ, որք ժողովուրդի կեանքին սերտ կապե-
լով կապուած, նորալ լեզուութիւնը և պակասու-
թիւնը լաւ ձանաչելով՝ գիտեման յարմար կերպի-

Նորա վերքերը մարդկ և հարազատ սպեղանիք
դնել, այսպիսի ուսուցիչներով միայն մեր դպրոցների
հարկաւոր աշակերտները սակաւ մի լըսի երես
սխալ տեսնեն՝ և այլն, Այստեղ խօսքը՝ Եւրոպայի
կենտրոնէն ուսուցիչները պարտաւոր են իրենց
վրայ և։ Աւելորդ փոխանակ խոհանոց խնամք իրա-
կան միջոցներ որոնելու՝ այդ ամենատեսչայնայնա-
տակի իրադրծութեան համար միակ հնար մեզ
ցոյց են տալի մեր ամեն քաղաքներէն ֆիւնիք (բար-
ժանութի) հաստիւր և մեր երիտասարդները ուղղա-
կի Աւրոպայ ուղարկելու՝ այն ժամանակ՝ չենք
կարող այդ առաջարկութեան մէջ մեծ խրամատ
մի չը դիտել, այն եղբարեակութեան մի ուսումն,
որ վերը յիշած ատամնաբոյժների երեխայի դեռ
չը բուսած կաճնապատմելը ազգայնով (բերիչ-
վով) դուրս քաշելէն պակաս չէ։

Երեսի կէմ մի փոքր քննութեան տակ ձգենք
այդ կերպ եղած առաջարկութիւնը՝ սխալ տես-
նելու, որ մեր հրապարակախօսները՝ կամ ամենեկին
չը կամեն ձանաչել մեր պոժման երիտասարդու-
թեան կազմութիւնը, չը դիտեն եւ թէ՛ Բնակչի
յատկութիւնը և օրտոքանտութիւն սխալ ունե-
նայ մի փորձապետական դպրոց մանուկ Հայրը -
կամ՝ Աւրոպիայ լուսաւորեալ քաղաքացի փորձապե-
տական ուսումնարանները իրանց կը թուի մի ներ-
կարարի կարող, որի մէջ ամեն Հայ երիտասար-
դի տեղանքներէն բռնած՝ մի երկու անգամ ընկրդ-
մենք թէ չէ, ահա մեզ համար պատրաստ կը լինի
ներկայած Հայ ուսուցիչը։ Հարցանում ենք մեր
հրապարակախօսներին՝ որպիսի երիտասարդու-
թիւնից սխալ քաղեն իւրեանց ուժերը Աւրոպա
ուղարկուելու փորձապետացութիւնը, Համարարան-
ների, Ճեմարանների, կամ դանապան տեղութեանց
միջնակարգ ուսումնարանների ուսանողներէն ար-
դեօք։

Այժմ ամենայն մտախորհ մարդ տեսնում է թէ
այդ տեղերից տարիներով սխալ Հայ փորձապե-
տացուներ որոնեալ որ մինին կամ միւսին գտնեալ,
այն եւ իրրե մի յաջողակ և պատահական գիտ-
ւած։ Այդ գիտարութիւնը շատերը բնական կը
տեսնեն մանուկանդ անտեսական հայեացքով, միա
դարձնելով այն գորտուր պայմաններէն որոնց ազ-
դեցութեան տակ մեր երիտասարդութիւնը ստիպ

ուած է այս և ոչ այն սարսափ ճանապարհներ
որոնել և երբեմն չըջամոյկի լմախտել։

Եւրոպայի դպրոցներէն նոյա պոժման դը-
րութեան մէջ նոյնպէս չենք կարող Աւրոպիայ
լուսաւորեալ քաղաքացի փորձապետական ուսում-
նարանաց համապատասխան աշակերտներ յուսալ։
Ուրեմն՝ մեզ կը մնայ պարտնայց ընդարձակ առա-
ջարկութեանը հետեւեալ առածով պատասխանել։
Այժմ որքա՞ն է իւրաքանչէր Եւրոպայի ուսումնա-
րանը՝ նաեւ յառաջ ոչ ոք չէ երկոտարեան տեսնու-
թեամբ ենք թէ մեր ընթերցողին արդէն պարզ է
մեր միտքը, չը երկարենք ուրեմն թէ՛ որպիսի երի-
տասարդների կարօտութիւն կայ։ Միայն պոժմ
իրը մեկանց ակներեւ կացուցանելու համար՝ մեր
ամեն լուսաւորեալ (Համարարաններում, Աւ-
սումնարաններում և զանազան Աւարձաններում,
ուսում առած) ընթերցողին կը հրաւիրենք՝ իւր
փափուկ բաղնիցի միայն և իւր զարգարուն սե-
նեկէն մի օր, մի ժամ իւրեան փոխադրել մօտով
Մշտ գաւառը, Աւան, Բաղէշ, Պարս, Ազուլիս,
Գիւմրի և այլն, այն եւս՝ ժողովրդական վար-
ժապետի պաշտօնով հանդերձ և սորա բոլոր
պարագայիւր։ Այսպիսի փոխարկութեան մէջ իւ-
կայն սխալ դպրոցներ ամենայն լըջութեամբ թէ՛
Բնէ և մեզ պակաս և Բնէ հարկաւոր, թէ՛ բաց ի
զարգացումը՝ որպիսի նորանոր դպրոցներների,
սովորութեանց, արամադրութեանց սխալ կարօ-
տելիք ամեն մի տեղի ժողովրդի դրութեան և պի-
տելից համեմատ, թէ՛ որքան մանուկ տեղեկա-
թիւնը սխալ ունենայինք մի քանի դիտութեանց
մէջ, մանուկանդ մեր աշխարհագրութեան և պատ-
մութեան (միջին դարերը առաւելապէս)։ Պիտի
զգայինք անշուշտ թէ՛ այդպիսի և նման տեղերում
առանց վհատութեան և լմալացուցիչ յուսարե-
կութեան միշտ գործունեայ ուսուցիչ լինելու հա-
մար՝ կէմ ոչ Պետապոցցու հանձնարը (որ շատ
հաղուապիտ է Ի հարկէ) գտնեալ նորա՝ ժողովրդի
մէջ ուղեւոր ուժը և կարողութիւնը սխալ ու-
նենայինք։ Սորա համար արտասահմանում կըր-
թութիւն տանելներս գեռ շատ փոքր սխալ լինէր,
այլ՝ մինչև Արտասահմանը մեր մանկական հա-
սակը այդ իսկ ժողովրդաց մէջ սխալ անցուցած
լինելիք, մեր պատանեկութիւնը այդպիսի նպա-



Երբ իսկապէս կրթեալ վարժապետներ մեր մէջ լազմանային, սոցանից պիտի դուրս գային այնպիսիք, որ ինքեանք ընդունակ լինէին՝ այժմեան միտքով մանկավարժներ, նորա հետ անբաժան և կրթեալ քահանաներ մեր յիշած Ուսումնարանների աշակերտներէն պատրաստել ուղղակի հայրենիքում։ Այս կերպ՝ մէկ կողմանէ մեր ծախսը փոքր առ փոքր պիտի սակաւեր, միւս կողմանէ՝ մի ողկոյղը բազմաթիւ պտուղներ իւր վերայ պիտի կրէր։

Մի բացատրութիւն ևս։ Գուցէ մեզ ասեն թէ՛ 1) վարժապետացուի և քահանայացուի կրթութիւնը բոլորովին միացրած՝ անյաջող խառնուրդ մի կարող է դուրս գալ. և եթէ այդ ևս չը լինէր. 2) մի թէ մեր որդիքը՝ ամենը՝ վարժապետներ և քահանաներ պիտի դառնան, որ միակ այդ նպատակին ծառայեցնենք մեր գլխաւոր ազգային ուսումնարանները։

Սորա դէմ՝ մանրամասնօրէն խօսելով՝ լրացական յօդուածի սահմանէն դուրս ելած պիտի լինէինք։ Առաջի պարբերութեան նկատմամբ կարծառօտ միայն ասենք, թէ՛ յետագայում երկու տեղ բերուած վարժապետացուաց ուսման առարկայից զխակարգութենէն ոչ մէկ հոգնելէ, որ կարելի լինէր աւելորդ կամ շտայլական համարել կրթեալ Հայ քահանայի համար, բացի մի Եւրոպական լեզուն (վերջի դասատներում) և մասամբ մարմնամարզութիւնը (այն ևս իբրեւ զիջումն մեր կողմանէ)։ աւելցնելու այլ ևս ոչինչ չենք գտնում, բացի Ժողովուրդային (որը ուսումնարանէն դուրս է և որին ընտելանալու համար մի տարի մի Եկեղեցում ծառայելը շատ և շատ բաւական պիտի լինի)։

Դառնանք օտար ազգաց նայինք։ Մասնաւոր վարժապետական ուսումնարաններով չքաւոր ամեն մի ազգ՝ Ժողովրդական վարժապետացուներ ըստ մեծի մասին քաղում է իւր հոգեւոր՝ զպրոցներէն և ոչ աշխարհական միջնակարգ ուսումնարաններէն. Հոգեւոր զպրոցների մէջ՝ թէ՛ ընդհանուր կրթութեան սահմանները լայնացնելով՝ թէ՛ վարժապետականութեան տարրեր մտցնելով։ Իսկ մեզ ուրիշ կերպ մտածել և գործելն անգամ՝ անկարելի պիտի համարինք, մանաւանդ որ այդ կերպն է մեզ ամենակարեւորը և ամենաօգտա-

ւէտը։ Այս կերպ՝ Օրինակ. Ներսէսէն Դպրոցի որոշուելը և ժողովութեանը այդ երէտ նպատակը տեսնելու մէջ և որոշեմէ՝ դոյ՛ն էր իբրեւ իբրեւ իբրեւ, և ոչ նորանոր նպատակներ ստեղծելը։ Այսպէս միայն զպրոցը պիտի ազատուի նորանոր անձոռնի խառնուրդներէ։

Գալով երկրորդ պարբերութեանը, օրինակով խօսինք, երբ մի մարդ հասարակ հացի կարօտութիւն կ'կրէ և իւր ունեցած հնարները հազիւ կը հասնին դորա գնելուն, նա հարկաւ եղ և պանքի ձեռք բերելը պէտք է թողնի պատահական դէպքերի։ Այս մեր վճռողական պատասխանը. ահա զիջողականն ևս՝ թող ընթերցողը չը մոռնայ, որ վարժապետացու կամ քահանայացու պատրաստելով մի ուսումնարան մասնակրթական (սպիտիւս) ուսումնարան չ'է դառնալու սոսկ մտքով. այլ՝ դարձեալ կարող է մնալ հանրակրթական կամ համազգային շրջանի մէջ։ Աշակերտները այդպիսի ուսումնարանի մէջ քաջ պիտի տեղեկանան բոլոր այն գիտութեանց, որ անհրաժեշտ կը համարուին այժմ ամեն լուսաւորեալ մարդոյ համար։ Չանազանութիւնն այս է միայն թէ՛ այդ գիտութիւնքը այն դիտմամբ, այն կերպով, այն մեթոդայով պիտի հաղորդուին, որ առաջայ վարժապետին կամ քահանային ևս առաւել նիւթ և հնար տան նոցա գործունէութեան մէջ. կամ այլ խօսքով՝ իրպէս այդ պիտի պահանջէր Ժողովրդի կարօտութիւնը և դրութիւնը։ Այս կերպ՝ աւարտած աշակերտների մի մասը եթէ ընդունակ չը լինին քահանայ կամ վարժապետ դառնալու, մեր միւս ասպարէզների մէջ դարձեալ առաւել օգուտով պիտի գործեն քան թէ այժմ՝ թէ՛ իրեւ վաճառական թէ՛ իրեւ զրազետ և այլն։

Արդարեւ՝ թաղաւորական ծառայութեան մտնելու և իսկոյն արհեստաւոր դառնալու պիտի գժուրանային, բայց այդպիսի դիտմանց այնքան կարօտութիւն չկայ, հնար ևս չունենք, Մանաւանդ որ բարեխնամ Տէրութեանց այդ նպատակաւ հիմնած ուսումնարանների դռները բաց են ցանկացողաց համար։ Այս հայեացքէն նայելով՝ ներսիսեան Դպրոցին մասնաւորապէս՝ կը տեսնենք որ սա մեծամեծ փութիւնութեանց ենթարկուելու կարօտութիւն չունի, ինչպէս շատերը կ'աղաղակեն։ Այլ՝

ծախսը միևնոյնը պիտի մնար. գործը մի փոքր պիտի յապաղէր. դորա մասին (սօսիլ ևս պէտքը չէ) և՛ Այսպէս պարտ ու պատշաճ պատրաստուած աշակերտներին ուղարկել Բէռլին կամ Հէլդելբերգ, յանձնելով նոցա այդ քաղաքների ուսուցչականաց խորհրդի հովանաւորութեանը:

Այս ծրագիրը դուցէ շատ մեծ և անգործագրելի երևի շատերին. Բայց չէ՞ որ Երջանկայիշատակ Ներսէսը իւր ուսումնարանի բացման օրէն՝ կը պատմեն թէ՛ սորանից շատ առաւել հարուստ ուսման ծրագիր իրագործելու կը դիմէր: Արդեամբ այսքանը գոնեա՞ տեսնուել է, որ սկիզբներում Ներսիսեան Դպրոցը Թիֆլիզու ճեմարանից յետ չէր մնում. ընդհակառակը՝ առաւել զարգացած աշակերտներ կը պատրաստէր: Եթէ այդ կարելի էր մեզանից 20 - 30 տարի յառաջ, ի՞նչու այժմ որ դպրոցը գլխաւորապէս լուսաւորեալ աշխարհականաց հոգաբարձութեան տակ է և այլն... Ի՞նչու այժմ այդքան յետամնացել ենք, որ վերը բերած մի համեստ ուսման ծրագիրը մեզ անհասանելի կարող է թուել: Երևի այն պատճառաւ, որ մեր՝ լուսաւորեալներիս յառաջադիմութիւնը՝ Խեցեղեանի քայլերին և շարժմանը շատ կը նմանի... Եւ մի՞թէ ամենայն զգայուն և ազնիւ Հայ սիրտ չը պիտի ճմլի և սեղմուի, ամեն ամօթխած Հայի երես հարիւր և հարիւր անգամ չը պիտի կարմիր՝ երբ միտ բերէ թէ՛ մօտաւորապէս 14 միլիօն մի ազգ, զանազան լուսաւորեալ կեդրոնների մէջ բուն ունեցող՝ միակ մի Ուսումնարան չ'ունի, որ արդեամբ իրագործէր օտար աղկաց գէթ միջնակարգ Ուսումնարանների Պոօդրամման:

Գալով մեր առաջուայ համեմատութեանը, եթէ մեր յիշեալ ուսումնարանքը դեռ երկար ժամանակներով խուլ մնան իւրեանց ազգանուէր կոչմանը, պէտք է խոստովանել այն ժամանակ թէ՛ մեզ իրաւի տիրել է և կը տիրէ այն ահաւոր և տաժանտ ակտը, այն երկխայական թշնամին, որ կ'անուանի անգղիական ցաւ կամ ինչպէս ուսումնականք կը գոչեն՝ Ռաքիտիզմ (ոսկրացաւ): Արդ՝ երկխայից մատաղ կազմուածքի մտրակը՝ երբեմն տարիներով յետ է ձգում երկխայի ատամների ծնելը և նոյն առհասարակ ֆիզիքական զարգացումը:

Երանի թէ՛ միայն այդքան. նա կոշտութեամբով լցնում է երեխի գազաթի ոսկրները, նորա կողքերը, վերջապէս ծոմնում է նորա ամբողջ ողնաշարը, այդ կերպ՝ պլանդակում նորա բոլոր մարմինը՝ ըստ մեծի մասին շուտով գերեզման ևս իջեցնում: Տգիտութիւն և անտարբերութիւն պիտի լինի այդ մեր ցաւը, թէ մի ուրիշ բան:

Բայց քանի հեռու կը դիտենք մեզնէ այդ տըխուր պատկերը, քանի չը կ'ամիսք տեղիք տալ՝ մեզ տիրելու այդ տխուր ապագային, նոյնքան առաւել ամենս պիտի աշխատենք շուտով պարզելու և պարզարանելու մեր կարեւոր խնդիրները: Ահաւասիկ մեր կողմանէ՝ "վարժապետներ պատրաստելու խնդրոյ" վերաբերութեամբ մինչ ց'այժմ լսուած խոհեմ ձայներին՝ մեր հասարակութեան մէջ առաւել արձագանք գտնելու համար պարտք համարեցինք այստեղ՝ բերել Պրօֆես. Բէրկլինի՝ 1869 թուական "Նօտգ—Դեօթը—Շուցէյտունգ" Մանկավարժական օրագրէն թարգմանած "յիսուն տեղիաներից"՝ քաղուածներ յարմարացնելով մասամբ մեր պայմաններին և պահելով միանգամայն անփոփոխ գլխաւոր սկզբունքները: Այդ իսկ ըսկզբունքները մեր մէջ գործադրելու թարգման միայն կամեցանք լինիլ մեր յառաջիկայ խորհրդածութիւններով, և այդ կերպ՝ Ինչպէս քնած չը թողնել կը ցանկայինք միայն:

(Մնացեալն ի յետագայս)

Պ. Հ. Ո. Գ. Ե. Ը.

ՄԻ ՔԱՆԻ ԽԵՄԻ

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

Երկրագունդը, որոյ վերայ զանազան շնչաւոր կենդանիք կրնալին և զանազան բոյսեր կբուսանին, ունի մեծ ազդեցութիւն նոցա կենաց և աճման վերայ: Ամենայն տեղ կայ որ և իցէ տեսակ կենդանի կամ բոյս. սակայն եթէ այն կենդանին կամ բոյսը տեղափոխի՝ անպատճառ կամ բոլորովին կոչնչանայ՝ կամ իւր առաջին ձևը կ'կորսնցնէ. օրինակ 2ինաստանու չայի ծառը, ուր որ կտանեն կ'չորանայ, նոյնպէս Անգղիացին (տեղափոխե-